քանադրէ և լուծիցէ ի կարգէն։ Եւ ահա՛ ոչինչ համարելով զայն ժողով և զայն թուղթն յորում ամենայն վարդապետքս կնքեցաք և Ջ աթոռակալքն. և այժմ իրաւունք արարէ՛ք։ Իրաւունք և դատաստան արարին. Որովհետև որ զմեզ ոչինչս համարելով եւ այսպէս գիր է առաքեր, և նա ևս մեզ պէտք չէ, և այսուհետև ոչ յիշեսցի անուն նորին ի պատարագն։

Շաբաթ օրս (19 Յուլիս) ոչ յիշեցին զկաթողիկոսն ի պատարագն, այլ զՍուրբ Լուսաւորիչն յիշատակեցին։

Եւ օրս զղապիէսքէրքն (փոխեցին) և եղև Անատոլի՝ Պօլուլու Մուստաֆա էֆէնտին եւ Ուռումէլի՝ Շապան էֆէնտին։

Եւ երեկոյիս քարոզ ասաց Իգնատիոս վարդապետն դաս քաշելով զՄուղնեցին եւ զհամախոհքն, և Մարտիրոս վարդապետն՝ ի յԱստուածածին, և Կիրակոս վարդապետն՝ ի Պալատ, և Խաչատուր վարդապետն՝ ի Ղալաթ։

Եւ Կիրակի օրս (20 Յուլիս) կէս աւուրս Վարդապետն ելեալ գնաց ի Պուրսա։ Երեկոյիս ի Սուրբ Նիկողոս գնացաք եւ զհացն երեկոյիս եւ առաւօտուս ի Մալղօջենցն կերաք։

Բշի օրս (21 Յուլիս) գնացի ի ժամ եւ անտի Շէրպէթճի Գրիգորն առեալ տարաւ զիս ի տուն եւ անդ նստեալ մինչև յետինք. և զողան հանեալ ի քովէս կամաւ իմով եւ ետուն յոսկերչութեան։

Գշի օրս (22 Յուլիս) սինսիլէ արարեալ կարդացոզացն եւ զամենեսեան թագաւորն ի ներս ձայնեալ ետ զմանսուպքն. ևս Ըստամպօլ էֆէնտիսին փոխեցին և եդին ի տեղի նորա (պարապ)։

Յաւուրս այսոսիկ դատաստանաւ, խրատիւ և բազում պատուիրով ետուն զփիլոն Տէր Անդրէասին Պալատու որ Ճիհէլլէմ կոչիւր, և ապաշխարանք՝ մինչև ի մահ աւագիրիցութեան չի խառնվի և Գ տարի պա-